ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդուրմային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիր» ներդրումային դրամաշնորհային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1032-26.03.2025-ՖՎ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիր» ներդրումային դրամաշնորհային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծն (փաստաթղթային կոդ՝ Կ-1032-26.03.2025-ՖՎ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) օրենքի նախագիծը մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծով սահմանված կարգավորումները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չեն պարունակում:

Միաժամանակ նշենք, որ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիր» ներդրումային դրամաշնորհային համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) **ուժի մեջ մտնելու ժամկետը անմիջականորեն կապված է Համաձայնագրի 7-րդ հոդվածի 7.6-րդ կետի «ե» ենթակետի v պարբերության հետ**, ըստ որի Համաձայնագիրը չի կարող ուժի մեջ մտնել այնքան ժամանակ, քանի դեռ Բանկը չի ստացել Արդարադատության նախարարության կողմից տրված իրավական եզրակացությունը, որը հաստատում է Լյուքսեմբուրգի օրենքների կիրառումը որպես համաձայնագրի պատշաճ օրենք և դրամաշնորհի շահառուի վավերական ներկայացումը արբիտրաժ՝ ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) արբիտրաժային կանոնների համաձայն: Մինչդեռ Արդարադատության նախարարությունը ներկայացրել է համապատասխան եզրակացություն, համաձայն որի՝ նշված դրույթը հակասում է «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
09.04.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է վավերացնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիր» ներդրումային դրամաշնորհային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 10.1 մլն եվրո ծավալով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 38 մլն եվրո, որը ֆինանսավորվելու է հետևյալ աղբյուրներից՝

- ԵՆԲ կողմից տրամադրված վարկ՝ 25 մլն եվրո,
- Եվրոպական միության «Հարևանության ներդրումային հարթակ»-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներ, որից ներդրումային դրամաշնորհ՝ 10.1 մլն եվրո, տեխնիկական աջակցություն՝ 650 հազար եվրո, այլ ծախսեր՝ 250 հազար եվրո,
- Երևանի քաղաքապետարանի սեփական միջոցներ՝ 2 մլն եվրո:

Ծրագրի իրականացման նպատակն է Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրային շենքերում, մասնավորապես՝ մանկապարտեզներում և պոլիկլինիկաներում իրականացնել էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացմանն ուղղված աշխատանքներ, որոնց արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել 38 հասարակական շենքերի (6 պոլիկլինիկա և 32 մանկապարտեզ) էներգիայի սպառումը մոտ 65%-ով, նվազագույնը 20 տարով ավելացնել շենքերի շահագործման ժամկետը, նվազեցնել CO2 արտանետումները մթնոլորտ:

Ըստ ՀՀ Ֆինանսների նախարարության տեղեկատվության՝ Համաձայնագրում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

(հեռ.՝ 011 513-668)

28.03.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է վավերացնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2024թ. նոյեմբերի 12-ին ստորագրված «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիր» ներդրումային դրամաշնորհային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ Աշխատանքների իրականացման համար դրամաշնորհի օգտագործման հետ կապված Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները սահմանելու նպատակով:

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի մի շարք շինություններում՝ մասնավորապես 38 հասարակական շինություններում, 6 բուժհաստատություններում և 32 մանկապարտեզներում նվազեցնել էներգիայի օգտագործումը, ինչպես նաև աջակցել էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգիայի զարգացմանը:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 38 մլն եվրո (երեսունութ միլիոն եվրո):

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ՍԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Սարգսյան (հեռ.՝ 011 513-270, 12-70)

08.04.2025 թ.